Վերոնշյալ հոդվածից հետևում է, որ օրենսդիրը դատական ծախսերի բաշխման հիմքում դրել է համամասնության սկզբունքը, որը պետք է համապատասխանի բավարարված հայցապահանջին:

Հաշվի առնելով վերոնշյալը և այն հանգամանքը, որ հայցը ենթակա է բավարարման, հիմնական պահանջ վերաբերում է գնման պայմանագրի միակողմանի լուծման հետ կապված վեճին, իսկ Հայցվորի կողմից նախապես 80,000.00 ՀՀ դրամի չափով վճարվել է պետական տուրքի գումար, որը նման վեճերով հայցադիմումի համար վճարման ենթակա պետական տուրքի գումարից՝ 30,000.00 ՀՀ դրամից, ավելի է 50,000.00 ՀՀ դրամի չափով, Դատարանը եզրահանգում է, որ «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ից հօգուտ «ԷՅ ՎԻ ԷԼ ԳՐՈՒՊ» ՍՊ ընկերության ենթակա է բռնագանձման 30,000.00 ՀՀ դրամ՝ որպես սահմանված չափով նախապես վճարված պետական տուրքի գումար, իսկ 50,000.00 ՀՀ դրամի չափով ավել վճարված պետական տուրքի գումարը ՀՀ պետական բյուջեից ենթակա է վերադարձման «ԷՅ ՎԻ ԷԼ ԳՐՈՒՊ» ՍՊ ընկերությանը:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 191, 192 և 234.12 հոդվածներով, Դատարանը

**Վ Ճ Ռ Ե Ց**

«ԷՅ ՎԻ ԷԼ ԳՐՈՒՊ» ՍՊ ընկերության հայցն ընդդեմ «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ի՝ թիվ «ԿՇՄՊ-ԷԱՃԱՊՁԲ-25/08» ծածկագրով պայմանագրի միակողմանի լուծումն անվավեր ճանաչելու և «ԷՅ ՎԻ ԷԼ ԳՐՈՒՊ» ՍՊ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին 19.05.2025թ. որոշումն անվավեր ճանաչելու պահանջների մասին, բավարարել:

Անվավեր ճանաչել 2025թ. փետրվարի 27-ին կնքված թիվ «ԿՇՄՊ-ԷԱՃԱՊՁԲ-25/08» ծածկագրով պայմանագրի «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ի կողմից 2025թ. մայիսի 12-ի միակողմանի լուծումը:

Անվավեր ճանաչել «ԷՅ ՎԻ ԷԼ ԳՐՈՒՊ» ՍՊ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող անձանց ցուցակում ներառելու վերաբերյալ «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ի 2025թ. մայիսի 19-ի որոշումը:

«Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ից հօգուտ «ԷՅ ՎԻ ԷԼ ԳՐՈՒՊ» ՍՊ ընկերության բռնագանձել 30,000.00 ՀՀ դրամ՝ որպես նախապես վճարված պետական տուրքի գումար:

ՀՀ պետական բյուջեից «ԷՅ ՎԻ ԷԼ ԳՐՈՒՊ» ՍՊ ընկերությանը վերադարձնել 50,000.00 ՀՀ դրամ՝ որպես ավել վճարված պետական տուրքի գումար:

Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ հրապարակելու օրվանից մեկամսյա ժամկետում:

Վճիռը կամովին չկատարվելու դեպքում այն կկատարվի դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով՝ պարտապանի հաշվին:

Դատավոր՝ **Գրիգորի Վարդանյան**

---

*Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am*